



## «Էմերալդ ցանց»

Եվրոպայի բնական  
միջավայրի պահպանությանն  
ուղղված միջոց.



COUNCIL OF EUROPE  
CONSEIL DE L'EUROPE





## Եվրոպան և կենսաբազմազանությունը

Կենսաբազմազանության անկումը շարունակվում է աշխարհով մեկ: Բնական միջավայրի մասնատվածությունը, աղտոտումը, բնական ռեսուրսների ոչ ողջամիտ օգտագործումն ու արհեստական լանդշաֆտների ստեղծումը ավելացնում են բնական միջավայրի կորստի չափերը, ինչպես նաև նվազեցնում տեսակների միգրացիայի և տարածման հնարավորությունը:

## Ինչպես և ինչ միջոցներով կարելի է ուղղել այս իրավիճակը

Էկոլոգիական ցանցերը կարող են դրականորեն անդրադառնալ Եվրոպայի գերբնակեցված և տարանջատված բնական տարածքների, բնական միջավայրի և տեսակների գոյատևման վրա: Նրանք ապահովում են էկոլոգիական սկզբունքների վրա հիմնված կենսաբազմազանության պահպանության մոդելն այն ժամանակ, երբ մարդկանցից ուսանք շահագործում են լանդշաֆտը:

Էկոլոգիական ցանցերը բաղկացած են երեք մասից. «միջուկային տարածքներ» (ապահովում են էկոլոգիական պայմաններ՝ կարևորագույն էկոհամակարգերի, բնական միջավայրերի և տեսակների պոպուլիացիաների պահպանության նպատակով), «միջանցքներ» (միացնում են միջուկային տարածքները), և «բուֆերային գոտիներ» (պահպանում են ցանցը փասակար ազդեցություններից):



## Դեպի Համաեվրոպական էկոլոգիական ցանց

1995 թ.-ին Եվրոպայի Բնապահպանության Նախարարներն ընդունեցին Համաեվրոպական Կենսաբանական և Լանդշաֆտային Բազմազանության ռազմավարությունը (PEBLDS), որպեսզի ամրապնդեն շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանության քաղաքականությունը: Նրանք կոչ արեցին «հատուկ պահպանվող տարածքների ինչպես ներսում, այնպես էլ դրսում բնության պահպանությանն աջակցելու նպատակով ներդնել Եվրոպական էկոլոգիական Ցանցը, որը միջուկային տարածքների և այլ անհրաժեշտ միջոցների ապահովմանն ուղղված անհատական ցանց է՝ միացված միջանցքներով և բուֆերային գոտիներով՝ դրանով իսկ նպաստելով տեսակների տարածմանն ու միգրացիային»:

Եվրոպիան ընդգրկող Համաեվրոպական էկոլոգիական ցանցի ստեղծումը PEBLDS-ին համապատասխանող առանցքային կարևորագույն քայլերից մեկն է և այն զարգանում է Եվրոպայի ողջ տարածքում ազգային, տարածաշրջանային և անդրսահմանային էկոլոգիական ցանցերի և նախաձեռնությունների հիման վրա:







## Եվրոպայի բնական միջավայրի պահպանությանն ուղղված միջոց. «Էմերալդ ցանց»

Վայրի կենդանական տեսակները չեն կարող պահպանվել բնական միջավայրից մեկուսացված պայմաններում: Այդ իսկ պատճառով վտանգված բնական միջավայրի պահպանությունը շատ կարևոր է Եվրոպայի և ամբողջ աշխարհի համար: «Էմերալդ ցանցը» Էկոլոգիական ցանց է՝ ստեղծված «Բնապահպանական Հատուկ Հետաքրքրություն ներկայացնող տարածքների» հիմնման նպատակով, հաստատվել է Եվրախորհրդի կողմից 1989թ.-ին և մեկնարկել 1996 թ.-ին, որպես Բեռնի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) ներքո իրականացվող աշխատանքների մի մաս: Այն ձևավորում է համաեվրոպական Էկոլոգիական ցանցը, միևնույն ժամանակ ներառելով երկուսն էլ՝ Բեռնի կոնվենցիայի Պայմանագրային կողմերի և դիտորդ պետությունների տարածքները:



Convention de Berne  
Bern Convention



Réseau Émeraude  
Emerald Network


«Արևելյան Եվրոպայի հարևանության երկրների և Ռուսաստանի դաշնության պահպանվող տարածքներում Կենսաբազմազանության Կոնվենցիայի իրականացման աջակցության»

**Եվրահամայնքը** նույնպես, համարվում է Կոնվենցիայի պայմանագրային Կողմ: Բնական միջավայրի պահպանությանն ուղղված Կոնվենցիայի համապատասխան պարտավորությունների իրականացման նպատակով 1992թ.-ին հռչակվեց Բնական Միջավայրերի երաշխավորագիրը, իսկ հետագայում, ավելի ուշ, ստեղծվեց «Նատուրա 2000» ցանցը:

«Էմերալդ ցանցն» ու «Նատուրա 2000-ը» ամբողջապես համադրելի են և ունեն համապատասխան մոտեցումներ եվրոպական մայրցամաքի բնական միջավայրի պահպանության զարգացմանն ուղղված գործում: Կենսաբազմազանության պահպանության ոլորտում Եվրախորհրդի և Եվրամիության միջև համագործակցությունը նրանց ընդհանուր պարտավորությունների տրամաբանական հետևանքն է:







Council of Europe  
Conseil de l'Europe



European Union  
Union européenne

## Բնությունը սահմաններ չունի. Եվրախորհրդի և Եվրամիության համագործակցումը

Բնակեցված լանդշաֆտային երկրներից Եվրոպան համարվում է մոզաիկ: Էկոհամակարգերի և կենսաբանական բազմազանության վրա ազդող գործոններն ավելի լայն են և չեն սահմանափակվում ազգային սահմաններով:

Այսպիսով, այն միջոցները, որոնք ձեռնարկվել են տեղական, տարածաշրջանային կամ ազգային առումով, հաճախ անբավարար կամ սխալ են լինում: Միայն միջազգային շրջանակներն են նպաստում կենսաբազմազանության և լանդշաֆտային զարգացմանը՝ աջակցելով փոխհամաձայնեցված նախաձեռնություններին:


Ահա թե ինչու Եվրախորհուրդն ու Եվրոպական Բնապահպանական Գործակալությունը (EEA) 2005-2008թթ. ստեղծեցին հարավ-արևելյան Եվրոպայում միասնական «Էմերալդ ցանց»-ի զարգացման ծրագիր: Այս ծրագիրը, որը ֆինանսավորում էր Եվրահանձնաժողովի կողմից (Քարտ դրամաշնորհների միջոցով), նպատակուղղված էր 100% նույնականացնելու Էմերալդ տարածքները («Բնապահպանական Հատուկ Հետաքրքրություն ներկայացնող տարածքներ») Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Խորվաթիայում, Մոնտենեգրոյում, Սերբիայում և Մակեդոնիայում:



Արտաքին համագործակցության գրասենյակի միջոցով հետևելով այս հաջողված առաջին համագործակցության փորձին՝ Եվրախորհուրդն ու Եվրամիությունը 2009թ.-ին ստեղծեցին մի նոր միասնական Էմերալդ ծրագիր, որի նպատակն էր զարգացնել «Էմերալդ ցանցը»՝ արդեն Եվրամիության հարևանության քաղաքականության 6 երկրներում, Արևելյան տարածքներում և Ռուսաստանի Դաշնությունում:







## Կենսաբազմազանության կոնվենցիայի Եվրամիության Հարևան քաղաքականության, Արևելքի և Ռուսաստանի պահպանվող տարածքների աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված աջակցություն



Ամբողջապես Եվրամիության կողմից ֆինանսավորված Եվրախորհրդի իրականացրած ծրագիրը մեկնարկել է 2009թ.-ին և կավարտվի մինչև 2011 թ. վերջը: Ծրագրի նպատակն է նույնականացնել և պահպանել «Էմերալդ ցանցի» մաս հանդիսացող բնական միջավայրերը ներքոնշյալ յոթ երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում, Ռուսաստանի Դաշնության Եվրոպական մասում և Ուկրաինայում:

Աջակցության համատեղ ծրագրի իրականացման ավարտին ակնկալվող արդյունքները լինելու են Հարավկովկասյան երեք երկրներում, ինչպես նաև Մոլդովայում, Էմերալդ ցանցում ներառված բոլոր 100% պոտենցիալ տարածքների, իսկ Բելառուսի և Ռուսաստանի Դաշնության համապատասխան պոտենցիալ տարածքների 50%-ի և Ուկրաինայի պոտենցիալ տարածքների 80%-ի նույնականացումը:

### Դուք գիտե՞ք

«Նատուրա 2000-ն» իրականացնող 27 եվրոպական պետությունները զբաղեցնում են 4.325.675 կմ<sup>2</sup> տարածք :

«Էմերալդ ցանցն» իրականացնող 21 Եվրախորհրդի անդամ պետություններ զբաղեցնում են 7.649.605 կմ<sup>2</sup> տարածք:

Ներկայիս համատեղ ԵԽ/ԵՄ ծրագրի համաձայն «Էմերալդ ցանց» ձևավորող Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի յոթ երկրները զբաղեցնում են **4.991.251. կմ<sup>2</sup>**:

2011թ.-ի վերջին Եվրախորհրդի և Եվրամիության միասնական ծրագրերի իրականացման արդյունքում կնույնականացվի «Բնապահպանական Հատուկ Հետաքրքրություն ներկայացնող տարածքների» Ցանցը՝ 13 երկրներում, որոնք կզբաղեցնեն 5.255.624 կմ<sup>2</sup> տարածք:







# Հարցեր և պատասխաններ

Ի՞նչ է «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիան»:


«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» Կոնվենցիան, որը ավելի հայտնի է որպես «Բեռնի Կոնվենցիա», իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է, որը Եվրախորհուրդը ընդունել է մեր մայրցամաքի կենսաբանական բազմազանության պահպանության ու կայունությանը նպաստելու համար: «Էմերալդ ցանցը» մշակվել է «Բեռնի Կոնվենցիայի» շրջանակներում:



## Որո՞նք են «Բնապահպանական Հատուկ Հետաքրքրություն ներկայացնող տարածքներ» (ASCI)

Բեռնի Կոնվենցիայի Մշտական Կոմիտեի ընդունած No.16-ը (1989) Հանձնարարականը սահմանում է «**Բնապահպանական** Հատուկ Հետաքրքրություն ներկայացնող տարածքները», որպես ներքոնշյալ պայմաններից մեկին կամ մի քանիսին համապատասխանող տարածքներ.

- Ջգալիորեն նպաստել Բեռնի Կոնվենցիայի համապատասխան Հավելվածներում ներառված՝ վտանգված, էնդեմիկ կամ այլ տեսակների պահպանությանը:
- Աջակցել «բարձր» տեսակային բազմազանությամբ աչքի ընկնող, տարածքների, եզակի տեսակների կամ մեկ կամ մի քանի կարևոր տեսակների պոպուլացիաների պահպանությանը:
- Պարունակել բնական միջավայրի կարևոր և/կամ վտանգված տիպեր:
- Պարունակել տվյալ բնական միջավայրի, կամ բնական միջավայրի տարբեր մոզաիկ տեսակների ակնառու օրինակներ.
- Լինել մեկ կամ մի քանի միգրացվող տեսակների համար կարևորագույն տարածք.
- Ջգալիորեն նպաստել Կոնվենցիայի ծրագրերի նպատակներին իրականացմանը:







## Ո՞ր երկրները կարող են կիրառել «Էմերալդ ցանց»

«Էմերալդ ցանցը» կարող են կիրառել պայմանագրի յուրաքանչյուր Կողմ և Բեռնի Կոնվենցիային Դիտորդ երկիր: 2009 թվականի դրությամբ, այն ներառում էր ԵՄ 27 անդամ երկրներ, 20 այլ եվրոպական երկրներ, 4 Աֆրիկյան պետություններ և Եվրոհամայնքը:

## Իրականում ինչպե՞ս է կիրառվում «Էմերալդ ցանցը»

«Էմերալդ ցանցի» կիրառումը բաղկացած է ազգային նախագծերի ծավալուն ծրագրերից, որոնք ստեղծված են փորձնական բազաների զարգացման տեսանկյունից ներառելով տվյալ տարածքներում և յուրաքանչյուր այլ երկրում հանդիպող բնական միջավայրերի ներկայացուցիչներ: Ազգային նախագծերը ներառում են նաև ազգային բազմամասնագիտական թիմերի ստեղծումն ու հաստատումը, որոնք միացնում են իրար շահագրգիռ երկրների գիտական տարբեր հիմնարկները միմյանց հետ:

Երեսուներեկ ազգային փորձնական ծրագիր իրականացվել և մինչ օրս էլ ուժի մեջ է:

Եվրախորհրդի/Եվրամիության միասնական ծրագիրը մեկնարկել է 2009 թ.-ին և կավարտվի 2011թ.-ի վերջին: Այս նախագծի նպատակն է նույնականացնել և պահպանել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի յոթ երկրների «Էմերալդ ցանցում» ներառված բնական միջավայրերը:

## Ինչի՞ համար է պետք հիմնել «Էմերալդ ցանցը» Աֆրիկայում

Բեռնի Կոնվենցիայի պայմանագրի մաս կազմող Աֆրիկյան չորս երկրներում «Էմերալդ ցանցը» կարող է պահպանել Եվրոպայի համար մեծ նշանակություն ունեցող միզազվող տեսակներին, բացասական ազդեցություն թողնող գործոններից և նպաստել համապատասխան գործունեություններին, որպեսզի պահպանվեն տեսակների գենետիկական բազմազանությունն ու նրանց բնական միջավայրերը:





## Եվրախորհուրդը

Եվրախորհուրդը միջկառավարական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1979թ. -ին: Կենտրոնը գտնվում է Ստրասբուրգում՝ Ֆրանսիա, և այժմ ունի 47 անդամ երկրներ: Հիմնական նպատակներից է նպաստել ժողովրդավարությանը, մարդու իրավունքներին և օրենքներին և գտնել Եվրոպայի բնակչության առջև մեր օրերում դրված խնդիրների լուծումը:



## Հավելյալ տեղեկության համար այցելե՛լ հետևյալ կայքը՝

[www.coe.int/emerald/fr](http://www.coe.int/emerald/fr)

### Contacts:

Council of Europe – DG IV  
Directorate of Democratic Governance, Culture and Diversity  
Iva Obretenova, Project Manager  
F-67075 Strasbourg Cedex

Tel.: +33 (0) 3 90 21 58 81 – Fax: +33 (0)3 88 41 37 51  
Email: Iva.OBRETENOVA@coe.int

Conception: Unité PAO / SPDP  
© Council of Europe, March 2012

Crédits photos: Agency of Protected Areas of Georgia (p.2; p.3; p.8), S. Aleksandrova (p.3; p.4), A. Aparicio Valenciano (p. 2; p.4; p.5; p.6; p.8), J.P. Bauer ( p.7), I. d'Alessandro (p.3; 5; p.6; p.8), V. Dombrowski (p. 6), European Space Agency (ESA) page 6, A. Evtuhovici (p.3; 4; p.5; p.7; p.8), E. Fernández-Galiano (couverture; p.2; p.4; p.6), V. Heluta (couverture; p.4 ; p.5; p. 6 ; p.7), E. Karpova (p.2; p.4; p.7), V. Liushyck (p.7), V. Mintarchenko (couverture), A. Pastorelli (p.7), M. Roekaerts (p.2; p.5), J. Sultana (p.3)

